ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/11

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից 26.01.2018թ. ներկայացված՝ «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական սարքավորումներ ձեռքբերելու նպատակով «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/4» ծածկագրով ընթացակարգը 33-35-րդ չափաբաժինների մասով հայտարարելու մասին որոշումը և սույն որոշումից բխող բոլոր այլ որոշումները դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2018/11 բողոքն առանց քննության թողնելու մասին «Ա-Մեդիկա» ՍՊԸ-ի 05.02.2018թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇԵՑ

«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից 26.01.2018թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**